Երեւանի քաղաքային խորհրդում

Յունիսի 11ին Երեւանի քաղաքային խորհուրդը վերըսկսեց իր աշխատանքը։ Նիստին չէր մասնակցում խորհրդի նախագահ Համբարձում Գալստեանը։

Նստաշրջանը շարունակեց համալրել խորհրդի մշտական յանձնաժողովների կազմը, ուր ամիսներից ի վեր թափուր բազմաթիւ տեղեր էին մնացել։

Քննարկումից յետոյ գրեթէ ամբողջացուեցին տնտեսական քաղաքականութեան, օրինականութեան, իրաւակարգի եւ մարդու իրաւունքների պաշտպանութեան յանձնաժողովները։ Յանձնաժողովների համալրմանը զուգահեռ առաջադրուեցին նաեւ դրանց նախագահների թեկնածութիւններ։ Քննարկուեց քաղաքային խորհրդի քարտուղար ունենալու հարցը, սակայն անհրաժեշտ ձայներ չապահովելու պատճառով հարցի վերջնական լուծումը յետաձգուեց։

Այնուհետեւ տեղեկացուեց, որ Երեւանի խորհրդի մի խումբ պատգամաւորներ վերջերս եղել են Ուկրաինայի մայրաքաղաք Կիեւում, ուր հանդիպումներ են ունեցել Կիեւի քաղաքային խորհրդում։ Նրանք տեղեկացրեցին, որ տեղի են ունեցել մամուլի ասուլիսներ, ցուցադրուել են Հայաստանի, Արցախի, Գետաշէնի եւ Մարտունաշէնի վերջին իրադարձութիւնների մասին պատմող տեսաժապաւէններ։ Մեր պատգամաւորները ելոյթ են ունեցել Կիեւի քաղաքային խորհրդում եւ ներկայացրել են Հայաստանի դիրքորոշումը, պատգամաւորներին տեղեկացրել են Կենտրոնի եւ Ադրբեջանի հակահայ գործողութիւններին։ Այնուհետեւ ընթերցուեց Կիեւի քաղաքային խորհրդի որոշումը, ուր հին սովորութեան համաձայն նորից հաւասարութեան մէկ գծի վրայ էին դրուած Հայաստանը եւ Ադրբեջանը։ Այս պատճառով դիմումը լաւ ընդունելութիւն չգտաւ։ Տեղեկացուեց նաեւ, որ խորհրդի ժողովրդավարական թեւը դժգոհ լինելով այդ որոշումից, ընդունել է առանձին յայտարարութիւն։

Պատգամաւորներից մէկը առաջարկեց հրաւիրել խորհրդի նախագահի տեղակալներին եւ լսել զեկուցումներ քաղաքում տիրող իրավիճակի մասին։ Այս առաջարկը ընդունուեց պատգամաւորների մեծամասնութեան կողմից։